




Ազդարարության Trumpet's Sound փող

55-ՐԴ ՏԱՐԻ, ԱԿԱՏՐԱԼԻԱ
ՆՈՅՏԵՐԻ - ԴԵԿՏԵՐԻ 2024





Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION
PUBLISHED BY THE
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057
email: pastor@armenianbrethren.org
URL: www.acmaust.org

«ԱԶԳԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ ԵՐԿԱՄՍՅԱ ՔԵՐՔՐԸ ՍԻՊՆԵՅԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԽՐԱՏԱՐԱՐԱԿՈՒՔՅՈՒՆԸ Է: Պատասխանատու խմբագիր՝ Իովիվ Հրաչ Գույուճյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Յանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ավետարանը..... 3ովիվ՝ Հրաչ Գույուճյան

Դատարկ ձեռքեր..... Նելլ Բուբման

Հարցեր Ամբակումից Դոն Սթոքմր

Ապաշխարություն. շրջվել՝ Աստծուն
հետևելու համար (3)..... Զորջ Հաուբ

Տիրո՞ժ փառքը..... Վեր.՝ Հովսեփ Հովսեփյան

Պատվիրանները գիտես... մի՛ գողանա..... Զաղված

Եվ տունը մտնելով, տեսան Մանկան..... Դոկտ.՝ Դանիել Զեյնս

Ավետարանը

Եսայի 9:6

Ի՞նչ է Ավետարանը

Ավետարանը բարի լուրն է այն մասին, որ Քրիստոսը ծնվեց Բեթլեհեմում՝ մարդկությանը փրկություն բերելու համար:

Կրկին սուրբծննդյան մթնոլորտ է՝ իր բոլոր խնջույքներով, տոներով, գնումներով ու նվերներով: Մենք՝ հավատացյալներս, երբեմն մոռանում ենք, որ դրա պատճառը Քրիստոսն է և ոչ թե տոնաձևեր կամ Ձմեռ պատյը:

Երբևէ պատկերացրե՞լ եք աշխարհն առանց Քրիստոսի կամ քրիստոնեության, առանց ներման, կարեկցանքի կամ Հոր սիրո: Երբ նայում ենք աշխարհում տիրող իրավիճակներին, հասկանում ենք, թե ինչու Հիսուսը պետք է գար:

- Հիսուսը եկավ՝ մեղքի գերությունից մեզ ազատելու համար:
- Հիսուսը եկավ, որ մենք կյանք ունենանք և առատորեն ունենանք:
- Նա եկավ՝ հավիտենության հույս տալու համար:
- Նա եկավ, որ ապրենք լույսի մեջ, ազատ՝ աշխարհի խավարից:

Ավետարանի բարի լուրի շնորհիվ՝

- Ես կարող եմ աղաղակել. «Աբբա Հայր»:
- Ես կարող եմ ուրախանալ Քրիստոսով:
- Ես հաղթանակ ունեմ մեղքի նկատմամբ:
- Ես փրկագնված եմ Գառան արյունով:
- Ես Նրա ոչխարն եմ, և Նա՝ իմ Հովիվը:
- Ես կարող եմ Սուրբ Ծնունդը տոնել՝ երկրպագելով Նրան հոգով ու ճշմարտությամբ. մի բան, որ ամեն օր անում ենք:

Ես աղոթում եմ, որ դուք, ձեր ընտանիքը և եկեղեցին օրհնյալ Սուրբ Ծնունդ ունենաք:

Հ. Գ.

Դատարկ ձեռքեր

«Որովհետև հավատով ենք քայլում և ոչ թե երևույթով» (Բ Կորնթ. 5:7)

Երբ դասարանում հարցրին, թե ինչ է հավատքը, մի տղա պատասխանեց՝ ասելով. «Հավատքն այն է, երբ հավատում ես մի բանի, որը գիտես իրականում ճշմարիտ չէ»: Սիրելիներս, արդյո՞ք դա հավատք է: Ո՛չ, իհարկե ո՛չ: Բայց պետք է խոստովանենք, որ շատ մարդիկ, ոչ միայն երեխաները, չեն հասկանում, թե ինչ նկատի ունենք, երբ խոսում ենք հավատքի մասին, և նույնիսկ շատ հավատացյալների համար դժվար է հասկանալ, թե ինչու է Աստված կանչել մեզ՝ քայլելու այս ճանապարհով:

Այսպիսով, եկե՛ք մի պահ խոսենք հավատքի մասին:

Առաջինը, որ պետք է հստակեցնել, այն է, որ մեր հավատքը ինչ-որ Մեկի հանդեպ է: Հավատքն ունի հասցե, նպատակակետ: Մենք վրտահում ենք Աստծուն: Դա շատ ավելին է, քան պարզապես հավատալն այն բանին, որ Նա գոյություն ունի: Հավատքը Նրան վստահելն է և Նրանից կախված լինելը, հավատալը, որ Նա հավատարիմ է և Նրա բոլոր խոստումները ճշմարիտ են:

Տեր Հիսուսի հանդեպ մեր ունեցած հավատքի մասին խորհելիս պետք է հաշվի առնել կարևոր մի հանգամանք: Մենք պետք է դատարկ ձեռքերով գանք Նրա մոտ: Ի՞նչ է դա նշանակում: Աստվածաշընչում կարդում ենք, թե ինչպես երիտասարդ Սավուղը այցելեց Սամուելին: Նա անհանգստացած էր Սավուղի համար նվեր չունենալու առումով (Ա Թագ. 9:7): Սավուղն ամաչում էր դատարկ ձեռքով գնալ. նա զգում էր, որ պետք է ինչ-որ բան նվիրի Աստծո մարդուց խնդրած խորհրդի համար: Բայց երբ վստահում ենք Քրիստոսին, մենք ընդունում ենք, որ ոչինչ չենք կարող անել մեր փրկությունը վստակելու համար: Եթե մտածենք, որ արժանի ենք Նրա սիրուն կամ կարող ենք վստակել այն, ապա այդպիսի ամենաչնչին միտքը կարող է խանգարել Նրա փրկարար շնորհը ճաշակելուն: Մեր բոլոր մեղքերի ներումը ստանալու համար պետք է դատարկ ձեռքով գանք Նրա մոտ և լիովին վստահենք Նրա մահվան ու հարության բավարար լինելուն:

Մենք վստահում ենք Նրան, քանի որ ոչինչ չենք կարող անել արժանանալու, վաստակելու կամ որևէ այլ կերպ ինքնրս մեզ փրկելու համար:

Եկե՛ք մի քիչ խորհենք: Ինչո՞ւ Աստված որոշեց փրկել մեզ հավատքի միջոցով: Ինչո՞ւ հավատքով պետք է ապրենք մեր կյանքը: Իսկապէ՞ս հավատքը լավագույն միջոցն է:

Տեսե՛ք, թե ինչ է գրել Պողոսը Հռոմեացիներին ուղղված իր նամակում. «*Հետևաբար, այն հավատից է, որպեսզի շնորհի միջոցով լինի, և խոստումը հաստատվի ամբողջ սերնդի համար՝ ոչ միայն Օրենքից եղողների, այլ նաև նրանց համար, ովքեր Աբրահամի հավատից են, որ մեր բնորդի հայրն է*» (Հռոմ. 4:16):

Փրկությունն ամբողջությամբ Աստծո գործն է, և մենք պարզապես վստահում ենք Նրա արածին: Քանի որ Նա կատարել է աշխատանքը, և ամբողջը շնորհով է, փրկության խոստումը միանգամայն վստահելի է: Երբ փորձում ենք ինչ-որ բանի հասնել. դա հաճախ ավարտվում է անհաջողությամբ, բայց Աստծո գործը ձախողության հանդիպելու ռիսկեր չունի: Նա չի կարող չիրագործել այն փրկությունը, որն աշխարհի արարումից առաջ նախատեսել է:

Բայց կա ևս մեկ պատճառ, թե ինչու ենք կանչված՝ հավատքով ապրելու: Հավատքը պարզապես ինտելեկտուալ չէ, պարզապես որոշակի տեղեկության հետ համաձայնություն չէ: Հավատքը սրտի հարց է, իսկ մեղքը խանգարում է հավատքին: Երբ սովորում ենք հավատքով քայլել, մեր սրտում եղած մեղքերը ջրի երես են դուրս գալիս: Երբ դա գիտակցում ենք, խոստովանում ենք և Մուրբ Հոգու միջոցով հաղթահարում ենք դրանք: Այդպիսով սկսում ենք ավելի ու ավելի նմանվել Տեր Հիսուսին:

Մեր հավատքը կենդանի Աստծո հանդեպ է: Մենք գալիս ենք Նրա մոտ դատարկ ձեռքով: Մենք ամբողջովին հենվում ենք Նրա վստահելի ու հաստատուն շնորհի վրա: Մենք սրբագործվում ենք, երբ սովորում ենք Նրա հետ քայլել հավատքի ճանապարհով:

Դավիթը Սաղմոսներում գրեց. «*Աստծո ճամբան կատարյալ է, Տիրոջ խոսքերը փորձված են: Նա բոլոր Իրեն հուսացողների սասպարն է*» (Սաղ. 18:30):

Հարցեր Ամբակումից

Ինչպիսի՞ հարցեր եք տալիս

Ինչպիսի՞ հարցեր ունենք, որոնց պատասխաններն ենք փնտրում: Մենք նայում ենք աշխարհին ու տեսնում անող բռնությունը: Հարցնում ենք՝ ինչ է անելու կամ անում կառավարությունը իրավիճակը շտկելու համար: Մենք գուցե հարցնենք, թե ինչ է Աստված անում մեզ շրջապատող խնդիրների վերաբերյալ: Ինչո՞ւ ինչ-որ բան չի արվում:

Այս հարցը բազմիցս տրվել է: Քրիստոսից ավելի քան 600 տարի առաջ Ամբակում մարգարեն նույն հարցը տվեց Աստծուն: Նա մտա-հոգված էր Հուդայի խնդիրներով: Ոգիա թագավորի օրոք վաճառա-կանները շատ հարստացան, բայց այդ հարստությունն արդար քրտին-քով չէին վաստակել: Թեև նրանք կանչված էին Աստծո ժողովուրդը լինելու, սակայն օգտագործում էին իրենց հարստությունն ու դիրքը՝ աղքատ խավերին հարստահարելու համար: Հատկապես այրիներն ու որբ երեխաները չափազանց շատ էին տուժում:

Ամբակումն աղոթեց Աստծուն: Նա խնդրեց, որ Աստված ինչ-որ բան անի: Բայց Երկինքը կարծես լուռ էր, և նա հարցրեց, թե քանի անգամ պետք է կանչի մինչև պատասխան ստանալը: Օրենքն անգոր էր թվում, արդարությունը չէր իրագործվում. ամբարիշտները շրջապատում էին արդար մարդկանց ու խեղաթուրում արդարությունը: Արդյոք սա ծա-նո՞թ իրավիճակ է:

Ամբակումն Աստծուց չստացավ իր ակնկալած պատասխանը: Աստ-ված ասաց, որ Ինքը վերահսկում է իրավիճակը: Նա օգտագործելու էր բարեկունացիներին՝ Հուդայի ժողովրդին պատժելու համար: Աստված իրականում օգտագործելու էր օտար ուժը՝ իսրայելացիներին պատժե-լու համար, ինչից նրանք չէին կարող բողոքել: Բ Օր. 28:49-50-ում դեռևս Եգիպտոսից Քանան գնալու ճանապարհին Մովսեսը ժողո-վրդին զգուշացրել էր Տիրոջը հավատարիմ չլինելու հետևանքների մասին. *«Տերը քո վրա հեռուններից՝ երկրի ծայրից մի ազգ կբերի, թռչող արծիվների պես արագաշարժ, մի ազգ, որի լեզուն դու չես հասկանա, կա-տաղի տեսքով մի ազգ, որ չի պատվի ձերերին և երեխաների հանդեպ գուլթ չի ունենա»:*

Սակայն Ամբակումին սարսափեցրեց այն միտքը, թե Աստված որ ազգի միջոցով էր պատժելու Իր ժողովրդին: Բարեխոսացիները շատ ավելի վատն էին, քան իրենք՝ հրեաները. նրանք դաժան էին, անսիրտ ու հպարտ: Ուստի նա երկրորդ անգամ հարցրեց Աստծուն: Նրա հարցում նկատում ենք Իսրայելի՝ Աստծո հանդեպ ամուր հավատքը: Երբ նա ասաց. «Մենք չենք մեռնի», նա իր վստահությունը հայտնեց Աստծուն առ այն, որ Հուդայի ժողովուրդն ապագա ունի, որ ամբողջ ժողովուրդը չի կործանվի: Բայց Ամբակումը ցնցված էր այն փաստից, որ Աստված օգտագործելու էր հրեաներից ավելի վատ մի ազգի՝ Իր ժողովրդին պատժելու համար:

Երկրորդ հարցը հետևյալն էր. ինչպե՞ս կարող էր Աստված օգտագործել ավելի ամբարիշտ մի ժողովրդի՝ Հուդային պատժելու համար: Թվում էր՝ դա ճիշտ չէր: Բայց այս հարցը տալով՝ Ամբակումը հասկացավ, որ կարող է մեղանչել Աստծո դեմ: Ուստի նա մտածեց, թե ինչ ասի, երբ Աստված ուղղեց իրեն:

Ամբակումը ստացավ մի պատասխան, որը հավանաբար չէր ակնկալում: Նրան հանձնարարվեց գրել տեսիլքն այնքան պարզ, որ սուրհանդակը կարողանա պատգամը ուրիշներին փոխանցել: Այն փաստը, որ պատգամն ապագայի համար էր, չփոխեց դրա ճշմարտացիությունը. այն պիտի կատարվեր: Միևնույն ժամանակ Տիրոջը հետևողները հավատքով պետք է ապրեին: Տիրոջ ճշմարիտ հետևորդները պետք է շարունակեին ապրել՝ վստահելով Նրան, որ Նա ամբարիշտների դեմ կգործի Իր ժամանակին և Իր ուզած ձևով: Հավատքով ապրելը բոլորովին տարբերվում է ամբարտավանների ապրելակերպից: Հավատքով ապրողները կարող են վստահ լինել, որ Աստված անպայման կգործի և ճիշտ ժամանակին կիրականացնի Իր դատաստանը:

Ամբակումը ուշադրությամբ լսեց Աստծո պատգամը և 2:6-20-ում մի շարք վայեր հայտնեց նրանց, ովքեր կատարում էին այս հանցագործությունները, և որոնց պատճառով առաջացել էր Ամբակումի սկզբնական հարցը: Այնուհետև 3-րդ գլխում նա երգեց փառաբանության մի Սաղմոս, երբ մտածում էր Աստծո հրաշալի գործերի մասին, որոնք Նա իրագործել էր նախորդ սերունդներում: Միևնույն ժամանակ այն միտքը, թե ինչ էր սպասվում իր ժողովրդին, սարսափով էր լցնում նրան: «Ձայնից դողացին շուրթերս, ուկրյուներիս մեջ փտություն մտավ» (3:16):

Այդուհանդերձ նա գիտեր, որ կարող է հանգստանալ նեղության օրը, երբ իր ազգի վրա թշնամին հարձակվի:

Ավարտելով իր փառաբանության երգը՝ մարգարեն բացարձակ վրստահություն հայտնեց Աստծուն. «*Եթե անգամ թզենին չծաղկի, ո՛չ էլ որթատունկերի վրա պտուղ լինի, ձիթենու բերքը ձախողվի ու արտերը կերակուր չտան, հոտը փարսխից կտրվի և մտորներում արջառ չլինի, ես դեռ իմ Տիրոջով պիտի ցնձամ, պիտի ուրախանամ իմ փրկության Աստծով: Տեր Աստվածն իմ գործությունն է, և իմ ոտները եղնիկներին նման է դարձնելու. և ինձ իմ բարձր տեղերի վրա է շրջեցնելու: Գլխավոր երաժրտին իմ յարային նվագարաններով»:*

Ահա Աստծո հանդեպ հավատքի ամենամեծ արտահայտություններից մեկը, որը երբևէ կկարդանք: Ամբակումը մտածեց, թե ինչ կլիներ, եթե լիակատար աղետ պատահեր իրեն: Նրա նշած աղետները իսպառ կվերացնեին որևէ հողագործի: Պտղատու ծառերի վրա պտուղ չկա, դաշտերում բերք չկա, ոչ մի հոտ ու նախիր: Հողագործը կկորցներ իր ողջ ապրուստը. նա կկործանվեր: Բայց այս հնարված ամենավատ սցենարում Ամբակումն ասաց, որ ինքը կցնձա Տիրոջով և կուրախանա իր փրկության Աստծով:

Արդյո՞ք Աստծո բարության նկատմամբ նման վստահություն ունենք: Արդյո՞ք հավատում ենք, որ մեր Աստվածն ամեն ինչ պահում է Իր ձեռքում և Իր ժամանակին կիրականացնի արդարությունը:

Ինչպե՞ս կարձագանքեինք Ամբակումի նկարագրած սցենարին: Եթե ամեն ինչ կորցնեինք և բախվեինք լիակատար կործանման, արդյոք Ամբակումի նման կասեի՞նք, որ ցնձալու ենք Տիրոջով և ուրախանալու ենք մեր փրկության Աստծով: Լավ է կանգ առնենք ու ինքներս մեզ հարցնենք, թե իրականում որքա՞ն խորն է մեր հավատքն առ Աստված:

Դոն Սթոքմըր



Ապաշխարություն. շրջվել՝ ճշմարիտ Աստծուն հետևելու համար (3)

Հարաբերական ապաշխարություն

Հովհաննեսն ասաց հավատացյալներին. «*Եթե ասենք՝ մեղք չունենք, ինքներս մեզ խաբած կլինենք, և ճշմարտությունը մեր մեջ չի լինի: Եթե խոստովանենք մեր մեղքերը, ասպա Նա հավատարիմ ու արդար է՝ մեր մեղքերը մեզ ներելու և մեզ բոլոր անիրավություններից մաքրելու համար: Եթե ասենք, որ մենք չենք մեղանչել, ասպա Նրան ստախոս կհանենք, և Նրա Խոսքը մեր մեջ չէ» (Ա Հովհ. 1:8-10): Տերունական աղոթքում Հիսուսը սովորեցրեց մեզ այսպես աղոթել. «*Ների՛ր մեր մեղքերը*» (Դուկ. 11:4): Այսպիսով, հրահանգ ունենք՝ մեր ձախողությունները (մեղքերը) շարունակ խոստովանելու:*

Աշակերտների ոտքերը լվանալիս Հիսուսն ասաց. «*Նա որ լվացված է, պետք չունի, բացի իր ոտքերը լվալուց, այլ ամբողջովին մաքուր է*» (Հովհ. 13:10): Այստեղ «*լվացված է*» արտահայտությունը խորհրդանշում է դիրքային ապաշխարությունն ու ներումը, իսկ «*ոտքերը լվալ*»-ը՝ հարաբերական ապաշխարությունը ու ներումը: Օրվա ընթացքում մի քանի անգամ լոգանք ընդունելու կարիք չկա, սակայն ոտքերի լվացումն անհրաժեշտ է կրկնել:

Ուստի քրիստոնյաները պետք է շարունակեն խոստովանել իրենց ձախողությունները (մեղքերը) և ապաշխարեն՝ Աստծո հետ իրենց հաղորդակցությունը վերականգնելու և պահպանելու համար: Աստվածաշունչը սովորեցնում է, որ քրիստոնյաները չեն կարող հոգևորապես անել որպես Հիսուս Քրիստոսի հետևորդներ՝ առանց ձախողությունների (մեղքերի) կանոնավոր խոստովանության և ապաշխարության: Քրիստոնյայի համար բոլոր ձախողությունները (մեղքերը) լուծված են մեր Փրկչի մահով: Պողոսն ասաց. «*Հետևաբար, հիմա դատասպարտություն չկա նրանց համար, ովքեր Հիսուս Քրիստոսի մեջ են*» (Հռոմ. 8:1): Բայց Աստված թույլ է տալիս, որ ժամանակ առ ժամանակ ձախողվենք, որպեսզի մեր հավատքը ամրանա:

Ձախողությունները (մեղքերը) փչացնում են հավատացյալի հարաբերությունն Աստծո հետ:

Մեր շարունակական ձախողությունների (մեղքերի) հետ վարվելու գործընթացն ամփոփված է ստորև բերված ենթակետերում:

Ընդունում. առաջին քայլը, պատճառաբանություններ գտնելու փոխարեն, մեր ձախողությունները (մեղքերը) ընդունելն է:

Խոստովանություն. հաջորդ քայլը մեր ձախողությունը (մեղքը) խոստովանելն է (Ա Հովհ. 1:9): Դավիթն ասաց. «Տիրոջ դեմ մեղք գործեցի» (Բ Թագ. 12:13): Զրիստոնյաները պետք է պարբերաբար դա անեն: Դա նշանակում է ընդունել ձախողությունները (մեղքերը) և խոստովանել դրանք, որպեսզի մեր հարաբերությունը վերականգնվի միմյանց և Աստծո հետ: Եթե ինքներս մեզ քննենք և Աստծո հետ ուղիղ հարաբերություն ունենանք, ապա Աստծուց չենք հանդիմանվի: Ահա թե ինչու քրիստոնեական կյանքում խոստովանությունը մեծ տեղ պետք է գրավի:

Ապաշխարություն. հաջորդ քայլը ուղղությունը փոխելն ու շրջվելն է՝ նորից Աստծուն հետևելու համար: Այն ներառում է լիովին փոխված վերաբերմունք ու վարքագիծ: Դա ավելին է, քան խոստովանությունը կամ գղջումը: Աստվածաշունչն ասում է, որ դա նոր սիրտ և նոր հոգի ունենալ է (Եզեկ. 18:30-32): Հայտնության գրքի եկեղեցիներին կոչ է արվում ապաշխարել (Հայտ. 2:5, 16, 3:3, 19):

Ներում. մեր մեղքն ընդունելուց, խոստովանելուց և դրանից ապաշխարելուց հետո Աստված ներում է առաջարկում: Նրա ողորմությունը մեծ է: Դավիթն ասացին. «Տերը ներեց քո մեղքը» (Բ Թագ. 12:13): Աստված Հայր է բոլոր նրանց համար, ովքեր Իրեն են վստահում: Ներումը վերականգնում է ձախողության (մեղքի) պատճառով խզված հավատացյալի կապն Աստծո հետ: Աստվածաշունչն ասում է. «Եթե խոստովանենք մեր մեղքերը, ապա Նա հավատարիմ ու արդար է՝ մեր մեղքերը մեզ ներելու և մեզ բոլոր անիրավություններից մաքրելու համար» (Ա Հովհ. 1:9):

Վերականգնում. Ներում ստանալով՝ մենք վերականգնվում ենք ու նորից հետևում ենք Զրիստոսին: Մա ուրախանալու առիթ է, ինչպես կարդում ենք անառակ որդու պատմության մեջ (Դուկ. 15:22-24):

2022 թ.-ի հունիսին թագուհու պլատինե հոբելյանի տոնակատարություններին ներկա էին նաև Մեգան Մարքլն ու արքայազն Հարին՝ Սասեքսի դուքսն ու դքսուհին: Ի պատիվ նորին մեծության 70-ամյակին նվիրված տոնակատարությանը՝ նրանք միացան թագավորական ընտանիքին՝ ներկա գտնվելով Սուրբ Պողոսի տաճարում գոհաբանության արարողությանը: Երկու տարի առաջ թագավորական ընտանիքի անդամությունից հրաժարվելուց հետո սա թագավորական արարողակարգերին մասնակցելու նրանց առաջին պաշտոնական մասնակցությունն էր: Արդյո՞ք արքայազն Հարին, Մեգանն ու թագավորական ընտանիքի այլ անդամները կհաշտվեն իրար հետ, երբ ընդհանուր արժեքների բացակայությունը թվում է հեռացրել է նրանց: Դժբախտաբար, օտարության զգացումը կարող է տիրել նաև ընտանիքում:

Քննարկում

Քարտեզն օգտակար չէ, եթե չգիտես, թե որտեղ ես գտնվում: Արդյո՞ք գիտեք, թե որտեղ եք Աստծո քարտեզի վրա՝ Աստվածաշնչում: GPS-ն օգտակար չէ, քանի դեռ չեք օգտագործում այն: Դուք կարդո՞ւմ եք Աստծո GPS-ը՝ Աստվածաշունչը:

Տեսանք, որ Աստծուն հետևելու համար դարձի գալը (ապաշխարությունը) ենթադրում է արմատական փոփոխություն: Դա տեսանք Հին Կտակարանում՝ Դավիթ թագավորի և Հովսիա թագավորի կյանքում, նաև Նոր Կտակարանում՝ անառակ որդու, Չաքեոսի և Պողոսի կյանքում:

Բայց մարդիկ կարող են մերժել ապաշխարության ուղերձը, ինչպես Նոյի օրերում և Հին Կտակարանի մարգարեների ժամանակներում:

Ո՞ւմ եք նման

Դիրքային ապաշխարությունը հաշտեցնում է մեզ Աստծո հետ: Դա նշանակում է շրջվել՝ ճշմարիտ Աստծուն հետևելու համար: Չաքեոսն ու Պողոսն ապաշխարեցին և Աստծո հետ հաշտվեցին ու դարձան Նրա ընտանիքի անդամները: Բայց սրանով գործը չի ավարտվում:

Հարաբերական ապաշխարությունն օգնում է մեզ պահպանելու ընտանեկան հարաբերությունը, երբ մենք մեղք ենք գործում: Դավիթ

թագավորը և Հովսիա թագավորը ապաշխարեցին՝ Աստծո հետ իրենց հարաբերությունը վերականգնելու համար: Պողոսը հորդորեց հավատացյալներին. «Մի կերպավորվեք այս աշխարհի կերպարանքով, այլ նորոգվե՛ք ձեր մտքի նորոգությամբ, որ քննեք, թե ո՞րն է Աստծո կամքը՝ բարին, ընդունելին և կատարյալը» (Հռոմ. 12:2): Աստվածաշունչը կարդալիս թո՛ւյլ տվեք, որ Սուրբ Հոգին փոխի ձեր միտքն ու վարքագիծը: Մենք պետք է շարունակ դարձի գանք՝ Աստծուն հետևելու համար, ինչպես երեխան է հետևում հորը:

Ամփոփում

Եկե՛ք Աստծո հետ ուղիղ հարաբերություն ունենանք: Դա պետք է շարունակական բնույթ կրի, եթե ուզում ենք Տիրոջ հետ մեր ընկերակցությունը վառ պահել: Եկե՛ք խնդրենք Աստծուն, որ օգնի մեզ՝ տեսնելու այն բաները, որոնք պետք է փոխենք կյանքում:

Ջորջ Հաուր

Տիրոջ փառքը

Ղուկ. 2:1-20

Սուրբ Ծնունդ ասելիս առաջինն ի՞նչ է մտքովդ անցնում, անկե՛ղծ եղիբ: Կասկածում եմ, որ մենք՝ հավատացյալներս և Հիսուս Քրիստոսի հետևորդներս, բավականաչափ ուշադրություն ենք դարձրել և փորձել ենք ճիշտ համատեքստում հասկանալ Քրիստոսի ծնունդը: Կարծում եմ՝ այն, թե ինչպես ենք նշում Քրիստոսի ծնունդը, ցույց է տալիս, որ սխալ ենք հասկացել Քրիստոսի՝ աշխարհ գալու նպատակը: Աստվածորդու ծնունդը, կյանքը, մահը և հարությունը սահմանափակել ենք երկու տոներով: Նրա ամբողջ կյանքից ընդամենը երկու իրադարձություն շեշտադրելով՝ մենք խեղաթյուրված ու սխալ պատկերացում ենք կազմել Հիսուսի և Նրա առաքելության մասին:

Առաջին իրադարձության ակնթարթային «լուսանկարում» փոքրիկ, գեղեցկադեմ մանուկն է՝ գունավոր խանձարուրով փաթթված: Այս «լուսանկարն» ունի հարյուրավոր տարբերակներ՝ կախված նրանից, թե ով է լուսանկարիչը: Այս պատկերը Սուրբ Ծնունդի առանցքն է,

որը տոնում ենք հունվարի 6-ին (դեկտեմբերի 25-ին): Երկրորդը երկու մարդկանց միջև և խաչին գամված մարդու «լուսանկարն է»: Սակոչվում է Սուրբ Չատիկ կամ Հարության տոն, որը նշվում է ավանդական տարբեր տոնակատարություններով:

Սակայն երբ այս երկու իրադարձությունները համատեքստից դուրս ենք բերում, ազոտ ու աղավաղված է դառնում Նրա առաքելության մասին պատկերացումը մարդկության համար: Սուրբ Ծնունդի գեղեցկությունը մտուրում լուսապսակը գլխին պառկած մանկան մեջ չէ, այլ Աստծո սիրո մեջ է. Նա այնքան սիրեց մեզ, որ Հիսուսի միջոցով աշխարհ եկավ՝ մարդկանց փրկելու: Դրա համար մենք պետք է շնորհակալ լինենք Նրան: Նրա փառքը լուսապսակի մեջ չէ, այլ Նրա փառքով է լցված շուրջբոլորը:

«Երկինքների պատմում են Աստծո փառքը, և հաստատությունը իմացում է նրա ձեռքի գործերը» (Սաղ. 19:1):

Իմ կարծիքով՝ Աստծո փառքն ու սքանչելիությունը կարող են տեսնել միայն նրանք, ում աչքերը բաց են (տե՛ս Գործք 7:55):

Այս անգուգական Ծնունդի մասին առաջինը տեղեկացնում են ոչ թե Երուսաղեմի կրոնական առաջնորդները, այլ Հրեաստանի սարերում ապրող հովիվները: Նրանք խոնարհ ու հավատարիմ մարդիկ էին ու պատրաստ էին լսելու Աստծո պատգամը:

Անկախ նրանից, թե որքան հասարակ կամ պարզունակ է քո աշխատավայրն ու գործի բնույթը, դա այն վայրն է, որտեղ դու կարող ես տեսնել Աստծո փառքը, եթե աչքերդ ու ականջներդ բաց պահես:

Եթե խորությամբ չես ըմբռնում Քրիստոսին և նրա սերը, ապա Սուրբ Ծնունդը դառնում է կրոնական անիմաստ տոնակատարություն: Մենք պետք է տոնենք այն եղելությունը, որ Աստված Հիսուս Քրիստոսի անձի միջոցով աշխարհ այցելեց: Նրա այցելության սկիզբը եղավ մտուրում, ավարտը՝ խաչի վրա, իսկ ընթացքում գլուխը դնելու տեղ չուներ: Հովիվները տեսան Տիրոջ փառքը. նրանց կյանքը փոխվեց:

«Բայց մենք ամենքս բաց երեսով Տիրոջ փառքն ինչպես հայելու մեջ տեսնելով՝ նույն պատկերի նման կերպարանափոխվում ենք փառքից դեպի փառք, ինչպես թե Տիրոջ Հոգուց» (Բ Կոր. 3:18):

Վեր.՝ Հովսեփ Հովսեփյան

«Պատվիրանները գիտես... մի՛ գողանա»

Մարկ. 10:19

Սուպերմարկետներից մեկում մի նախագգուշացում կարդացի, որտեղ գրված էր, որ եթե որևէ մեկը բռնվի գողության մեջ, ենթարկվելու է քրեական պատասխանատվության: Սա խոսում էր տհաճ հետևանքների մասին, որոնք կառաջանային նրա մոտ, ով կփորձեր որևէ բան գողանալ խանութի վաճառարահից: Ամենակարևորն այն է, որ նրանք, ովքեր նման արարքը համարում են ընդունելի, իսկ բռնվելու վտանգը՝ աննշան, սխալվում են: Մենք գտնվում ենք տխուր իրավիճակում: Կարծես թե մարդկանց մոտ կորել է այն հասկացողությունը, որ չարը միշտ չար է, և որ Աստծո համար մեղքը միշտ մեղք է մնում: Բացահայտ գգուշացումը, որի մասին գրված է վերևում, ուղղված է մարդու խելամտությանը այն հույսով, որ նա հեռու կմնա հանցագործություն գործելուց:

Եկե՛ք չխաբվենք: Վտանգը միայն բռնվելու հավանականությունը չէ և տուգանք վճարելը չէ: Չարիք գործելու իսկական վտանգը այլի մեջ է. *«Աստված ամեն գործ, բոլոր թաքուն բաների հետ, թե՛ բարին, թե՛ չարը դատաստանի է ենթարկելու»* (Ժող. 12:14): Պարզ է, որ յուրաքանչյուրը պատասխանատու է Աստծո առաջ:

Այդուհանդերձ Աստված սիրո Աստված է: Նա ոչ թե ուզում է սպառնալ դատաստանով, այլ նախագգուշացնել մարդկանց: *«Մի՛թե ես ամբարշտի մասին եմ ցանկանում, - ասում է Տեր Աստված, - և ոչ թե այն, որ նա դարձի գա իր ճանապարհից ու սպրի»* (Եզեկ. 18:23): «Դարձը» մարդուն պետք է տանի Տեր Հիսուս Քրիստոսի՝ Աստծո Որդու մոտ, ում արյունը Գողգոթայի խաչի վրա է թափվել մեր փրկության համար: Նրա միջոցով մենք կարող ենք ստանալ մեր մեղքերի ներումը (տե՛ս Մատթ. 26:28-ը): Նրանք, ովքեր հավատում են Նրան, դատաստանին չեն մասնակցելու (տե՛ս Հովի. 5:24):

Քաղված


**«Եվ տուևը մտնելով, տեսան Մանկանն իր մոր՝
Մարիամի հետ և ընկան ու երկրպագեցին
Նրան: Յետո բացելով իրենց գանձերը՝
ընծաներ մատուցեցին Նրան՝ ոսկի,
կնդրուկ և զմուռս» Մատթ. 2:11**

Նրա շնորհով հասանք շատ օրհնված տարվա ավարտին: Տերը ուղղորդեց մեր սրտերը՝ Իր կոչմանը հավատարիմ մնալու և Ավետարանն աղքատներին քարոզելու, մեր առաքելության մեջ հարատևելու:

Մատթ. 2:11-ում «նրանք» դերանունը վերաբերում է մոզերին: Հունարեն բնագրում մոզերի համար օգտագործված բառը «magos»-ն է: Այն երեք անգամ է օգտագործված Մատթ. 2-րդ գլխում: Հնարավոր է, որ նրանք Արևելքի գիտնականներ էին, ովքեր ուսումնասիրել էին Աստծո արարչագործությունը և Տիրոջ Հոգուց առաջնորդված՝ փրկություն էին հրեա ազգին տրված խոստումը: Հետաքրքիր է, որ «magos-ն օգտագործված է նաև Գործք Առաքելոց 13-րդ գլխում կեղծ մարգարեի մասին խոսելիս:

Աստծո Հոգին միշտ առաջնորդում է դեպի ճշմարիտ Աստված և Նրա Որդին: Սա ակնհայտ երևում է այս պատմության մեջ. անձանոթ օտարերկրացիները գալիս են՝ մանուկ Հիսուսին երկրպագելու: Ինչպիսի՛ հրաշք:

Հայաստանի մեր աշխատակիցները և նրանց ընտանիքները շուտով մեկնելու են Մոլդովա՝ միանալու սուրբծննդյան միջոցառումներին, որոնք կազմակերպվելու են Christian Mission International Aid (CMI-AID)-ի կողմից Չիրնեստ գյուղում: Սա ամենամյա միջոցառում է, որտեղ երեխաները և մեծերը հավաքվում են՝ դիտելու մի հետաքրքիր ներկայացում և մասնակցելու ավետարանչական գործունեություններին: Սա ACM-ի աշխատակիցների առաջին գործուղումն է, որը տևելու է դեկտեմբերի 5-23-ը:



Մոզերը մտան տուն ու տեսան մանուկին Իր մոր՝ Մարիամի հետ: Աստվածաշունչը շատ հստակ ասում է, որ հենց այդ պահին նրանք ծնկեցին ու երկրպագեցին Նրան: Նրանք միայն Տեր Հիսուս Բրիստոսին երկրպագեցին: Նրանք ճանապարհ էին ընկել՝ Թագավորին փնտրելու համար:

Աստղն ուղղեց նրանց աչքերը, բայց Հոգին առաջնորդեց սրտերը: Նրանք բացեցին իրենց գանձերը՝ թանկարժեք հագնազյուտ նվերները՝ հավիտենական Թագավորին նվիրելու:

Մոլորվայում Ավետարանը ներկայացվում է աղքատներին: Մոլորվան որոշ ժամանակ հայտնի էր որպես Եվրոպայի ամենաաղքատ երկիրը: Մեր աղոթքն է, որ միջոցառմանը մասնակցող մարդկանց սրտերը բացվեն՝ ընդունելու ամենամեծ գանձն ու նվերը՝ մեր Տեր ու Փրկիչ Հիսուս Բրիստոսին:

Մենք շարունակում ենք աղոթել այս և այլ ավետարանչական և ուսուցողական միջոցառումների համար, որոնք ծրագրված են գալիք ամիսների համար Մոլորվայում, Հայաստանում և Լիբանանում:

Դոկտ.՝ Դանիել Ջեյմս